

## ՔԱՌԵԱԿԱԿԱ

(Ծարքագիր՝ 1970, թ. 9-10, էջ 287-289)

Գրեց՝ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

Մարդու կենարունն իր սիրառը չէ, ոչ էլ ուղեղն է մարդու,  
Չար նախանձն է սրտի սիրառ, նախանձն անշեղն է մարդու,  
Մարդը մարդուն է նախանձում, ազգը ազգին, իմացի՛ր,  
Ա՛յս, չար նախանձն՝ անյազթելին ու խելահեղն է մարդու:



Ամէն անդամ, երբ Հայաստանն օտար թրի տակ է ընկնում՝  
Հայոց գլխից հաղար ու մի ազատութեան թագ է ընկնում, —  
Հաղարն ընկան... վերջին թագը մընաց գլխին սուրբ Մաշտոցի,  
Այն էլ, ահա, հաղար օտար լեզուաթրի տակ է ընկնում...:



Որթատունկի ողկոյլ կրծքից անապորոյն է ծաւում,  
Ապշում ևմ ևս, որ խաղողից մեղ խարող թոյն է ծնւում,  
Զէ, թող հարրիմ այնքան, որ ճեղ թըւամ մի ողջ խենթանց,  
Բանաստեղծի խենթութիւնից իմաստութիւն է ծնւում...



Մօրըս ըարի աչքիրի մէջ մէծ կաչցեալն է խօսում,  
Ես Աստծու ոտնաձայնը սրտիս միջից եմ լըսում,  
Ինչքան էլ ինձ ըստեր դառնայ իմ դարի չար սատանան՝  
Ինձ չի կարող անդունդ գըցել, ինձ հետ Աստւած է խօսում...



Ինձ թըւում է, թէ մութի մէջ ինձ դաւում են անդադար,  
Թուն թէ արթուն ականջիս մէջ փնտվում են անդադար,  
Ա՛յս, կը դաւեն գեռ մութի մէջ, անդամ լոյսով կը դաւեն,  
Քանի այսպէս մընայ հրկէղ մի դարի մէջ երկու դար:

## Ք Ա. Ռ Ե Ս. Կ Ե Ր

(Ծարք. Բազմ. 1970, թ. 9-10, էջ 287-289)

Գրեց՝ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

Մարդու կենարունն իր սիրառը չէ, ոչ էլ ուզեղն է մարդու,  
Զար նախանձն է սրտի սիրառը, նախանձն անշեղն է մարդու,  
Մարդը մարդուն է նախանձում, աղջը աղջին, իմացի՛ր,  
Ա՛խ, չար նախանձն՝ անյաղթելին ու խելահեղն է մարդու:



Ամէն անդամ, երբ Հայաստանն օտար թրի տակ է ընկնում՝  
Հայոց գլխից հաղար ու մի ազատութեան թադ է ընկնում, —  
Հաղարն ընկան... վերջին թագը մընաց գլխին սուրբ Մաշտոցի,  
Այն էլ, ահա, հաղար օտար լեզուաթրի տակ է ընկնում...:



Որթատունկի ողկոյզ կրծքից անապորոյն է ծաւում,  
Ապշում եմ ես, որ խաղողից մեղ խարող թոյն է ծնւում,  
Զէ, թող հարբեմ այնքան, որ ձեզ թւռամ մի ողջ խենթանոց,  
Բահաստեղի խենթութիւնից իմաստութիւն է ծնւում...



Մօրըս բարի աչքերի մէջ մեծ Խաչեցեալն է խօսում,  
Ես Աստղու ոտնաձայնը սրտիս միջից եմ լըսում,  
Ինչքան էլ ինձ ըստեր դառնայ իմ դարի չար սատանան՝  
Ինձ չի կարող անդունդ զըցել, ինձ հետ Աստւած է խօսում...



Ինձ թըւում է, թէ մութի մէջ ինձ դաւում են անդադար,  
Քուն թէ արթուն ականջիս մէջ վնովում են անդադար,  
Ա՛խ, կը դաւեն գեռ մութի մէջ, անդամ լոյսով կը դաւեն,  
Քանի այսպէս մընայ հրկէղ մի դարի մէջ երկու դար:



Ասի՞ կինը ինձ սուրբ հաց է, Աստւած իմ,  
Քար դուրս եկաւ՝ կեանքըս լաց է, Աստւած իմ,  
Հաղար կինն էլ մօր մի մաղն էլ չի դառնայ,  
Աստւած կինն էլ անաստւած է, Աստւած իմ:



Ո՞վ կարող է վարդի բոյրը, Հովի թովքը նըկարել,  
Կամ սոխակի քնքուշ ձայնը՝ վարդի գովքը նըկարել,  
Իմ նկարը՝ ծով կուլ տըռող Ովկիան սրտիս մի շիթն է,  
Աստւած ինքն էլ անկարող է իմ խըռովքը նկարել...



Կինըդ ինչքան շատ է սիրուն՝ բախտիդ ձօնը չէ, ու չէ,  
Քո օջախը դաշն պահող երգեհննը չէ ու չէ,—  
Շատ մի կընոջ գեղեցկութեամբ՝ մարմնով խարւած՝ մանկացիր,—  
Կինըդ ինչքան մարմնագեղ է՝ աւաղ, այնքան քոնը չէ...



Եւ դժբախտ է, եւ բախտաւոր, եւ լոյս, եւ մութ իմ դարը,  
Եւ բարի է, եւ դաժան է, ժանտ ու անդութ իմ դարը,  
Երնէկ ծնւած ըլինէի, կամ թէ յետոյ ծնւէի,—  
Ինքն իրեն էլ կ'ուտէ վերջը մութ յորձանուտ իմ դարը:

(Շարունակելի)